Եղիշե Չարենց

Ես լռել եմ հիմա, խոնարհվել եմ հլու

Ես լռել եմ հիմա, խոնարհվել եմ հլու
Սի՛րտս գիտե միայն՝ արշալույս է գալու:

Սիրտս գիտե հիմա՝ պիտի իջնի գիշեր,
Պիտի մեռնի, մարի ամեն կարոտ ու սեր:

Մութը պիտի իջնի ու աշխարհը այս հին
Պիտի ցնո՛րք դառնա, պիտի գգվի մահին:

Պիտի ցնդի, մարի, որպես հեռու մի հուշ
Մինչև կարմիր վառվի արշալույսը անուշ:

Մինչև վառվի մուժում արևը հուր, հզոր
Ու նո՛ր փայլով խնդա հորիզոնը բոսոր:

Սիրտս գիտե հիմա, որ արևը մեր այս
Փայլ է ուրի՛շ կյանքի, ուրիշ կյանքի երազ:

Պիտի իջնի, մարի երկինքներում բոսոր
Որ արթնանա նորից՝ հեռավոր ու հզոր:

1919-1920